

„ԲԱՐԵՊԱՅՏ ՄԱՐԴԻԿ“

ՊՕԷՄԻԱՅԻ ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՐԳ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՅԻ

Պարկեշտասուն, համեստափայլ
Օրիորդներ ու տիկիներ,
Ագնիւ, խոհեմ, գիտուն և այլ
Լաւ յատկութեան տէր պարոններ.
Դուք ամենքդ, որոնք արժան
Դատէք կարգալ այս գրուածքը,
Մի ենթարկէք խիստ քննութեան
Սորա ոճը ու հիւսուածքը:
Արեւն անգամ չէ անարատ,
Նորա վրայ էլ բծեր կան շատ:
Մահկանացուն այս աշխարհում
Միշտ եղել է մեղանչական,
Բացի Պապից, որ նորերում
Հռչակուեցաւ անսխալական:
Բայց երեւի, թէ սուրբ հայրը
Մոռացել է Փրկչի խրատը,
Որ ասում էր՝ թէ եղբայրը
Չկատարէ եղբօր դատը,
«Զք տեսնես զշիւղ յական
Եղբօր քո և ի քում ական
Ձգերանդդ ո՛չ տեսնես»:

Ահա Տիրոջ բուն խօսքերը,
 Որ լիչեցնում եմ նորան ես
 Եւ լուանում իմ ձեռները:
 Ուրեմն ազնիւ ընթերցողներ,
 Խնդրում եմ ինձ խիստ չգատէք,
 Եթէ տեղ տեղ անհարթ տողեր
 Գրուածքիս մէջ կը նկատէք:
 Դորա համար մի լաւ խօսք կայ՝
 Licentia poetica.

Բայց ինչք ինձ այս բանն իզուր
 Այսքան պիտ' անհանգստացնի.
 Մեթէ առակս հազար ու բիւր
 Մարգկանց ձեռը պիտի անցնի:
 Յայտնի է, որ առհասարակ
 Հայ ազգը չէ ընթերցասէր.
 Կարծես ի զուր բազմավաստակ
 Սուրբ Սեւրովը հնարեց տառեր.
 Գուտտէներգի գիւտից անմահ
 Հայերը չեն քաղում շատ շահ:
 Գիրք կ'ըրչալը դեռ մեզ համար
 Պիտոյք դարձել չէ կենսակոն,
 Թէեւ արդէն քանի մի դար
 Ունինք մամուլ տպագրական:
 Մենք լրագիրներ ունինք նոյնպէս,
 Ամենօրեայ մինչեւ անգամ.
 Բայց գալիս են նոքա հանդէս,
 Մի եօթնեկում երեք անգամ.
 Օրագիրներ ունինք նաեւ,
 Որը ծանր, որը թեթեւ,
 Եւ գոցա հետ քանի մի հոտ
 Լոյս են տեսնում տարէնը գիրք,
 Որոնց մէջը թէ քիչ, թէ շատ
 Երևում են քանքար ու ձիրք:

Բայց ապրանքն այդ հայի համար
Գին չունի և չէ պիտանի.
Լաւ է, թէ մի մանրավաճառ
Քաշով գնէ փաթաթանի:
Անմըխիթար մի երևոյթ—
Այո՛, բայց այդ հային չէ փոյթ:

Լուսաւորեալ կոչուած դասը
Հայերէն չէ կարդում երբէք.
Գրադ կը գամ մէկին տասը,
Եթէ ասածս կը հերքէք:
Եւ եթէ այդ ընտրեալներից
Եւ այնպիսի կան անհատներ,
Որոնք ստիպուած լոկ պատշաճից
Երբեմն առնում են հայ գրքեր,
Կամ ի պատիւ բարեկամին,
Բաժանորդ են մի օրագրին.
Սակայն զիտեմ, որ չեն կարդում,
Թերթերն անգամ չեն կտրտում:
Դարիս զաւակ կըթուած հային
Հայ միտքը չէ հետաքրքրում,
Գրականութեանը օգգային
Ծանօթ չէ նա, չէ համակրում.
Եւ թէ՛ սնունդ բարոյական
Մեր պարոնին intelligent
Կարող են տալ «Քնար Հայկական»,
«Կռուածաղիկ», «Նամուս» կամ «Խէնթ»:
Ուրիշ բան են եւրոպական
Հեղինակներն տնդուգական.
Վիկտոր Զիւզօ, Զօլա, Դօդէ,
Շէկսպիր, Բայռն, Շիլլէր, Դէօտէ,
Որոնց անմահ գրուածները
Հիացնում են ընթերցողին,
Վսեմ ոճը, դարձուածները

Յափշտակում միտքն ու հոգին:
Այդ այդպէս է, և դորա դէմ
Ով կարող է ասել մի բան:
Ախայն այս էլ հաստատ գիտեմ,
Որ ամենքն էլ չեն լեզուաբան՝
Լուսաւորեալ մեր հայերը
Եւ զմայլում են շատ շատերը
Արեւմուտքի գրականութեամբ,
Հարկաւ օտար թարգմանութեամբ:

Իսկ այն դասը, որ չէ առել
Դպրոցական կարգին ուսում,
Այլ ժէ ճէ ռա է սովորել,
Միայն հայերէն կարդում, խօսում.
Որ սկսել է իւր ուսումը
Երեւելի հեգարանից,
Ուր անդրանիկ երեսումը
Ճակտին տպած է՝ «Խաչ, օգնեա ինձ».
Յետոյ սերտել է «մի կանոն»,
Ուտելով շատ ճիպոտ, քանոն
Բազմահմուտ և բանիբուն
Իւր խալիֆա-վարժապետից,
Որին հայրը տալով որդուն
Ասում էր. «քեզ միսն, ոսկորն ինձ»:
Այնուհետեւ կարդացել է
Նա «մեծ ստղմոս», կամ ժամագիրք,
Եւ ընութիւնից թէ ստացել է
Ունակութիւն, շնորհք ու ձիրք,
Նա իւր ուսմանը քրտնաջան,
Նարեկով է տուել վախճան:
Այդ դասն ահա, որին գրագէտ
Անունը միայն կարող եմ տալ,
Որովհետեւ է նա տգէտ,
Գիտէ միայն գրել կարգալ.
Որի համար «Եֆիմէրդին»,

«Պղնձէ՛ քաղաքի պատմութիւնն»,
 Կամ թէ մի հին կարաբաղին
 Շատ բարձր են քան նոր դպրութիւնն,—
 Դա էլ գրուածքս չի կարդայ,
 Դորա համար գրօջ չարժէ դա:

Փոքր մնաց մոռանալի
 Մեր խմբագիր պարոններին:
 Ճշմարտութիւնն ուրանալի,
 Զայրացնէի կամքը վերին,
 Կարող էի յոյս ունենալ
 Արժանանալ ներողութեան,
 Քան՝ երբ յանկարծ պատահէր տալ
 Պարոններին մոռացութեան:
 Ո՛հ, նոքա շատ ինքնասէր են,
 Որովհետեւ գրչի տէր են:
 Թէ՛ իմացարդ ու գրուել
 Նոցա սէրն ու համակրանքը,
 Որ շատ հեշտ է, ևս առաւել,
 Երբ որ նոցա փուտ ասլրանքը—
 Լրագիրը—գովես, ճարեո
 Բաժանորդներ քանի մի հատ,—
 —Թէև ողջ թերթը քրքրեո
 Առողջ մտքեր չես գտնի շատ,—
 Ուսուցիչ ես, թէ գերատան,
 Նկարիչ ես, թէ վիպասան,
 Քո վիճակը ասպահով է.
 Յօդուածներով ումողջ մի շարք
 Խմբագիրը քեզ կը գովէ,
 Կը հիացնէ համայն աշխարհք,
 Հռչակելով քեզ մի հանճար.
 Բայց վայ է քեզ, թէ դու նորան
 Թշնամացրիր. ամեն լոռն չար
 Պատրուստ են նրա գրիչն ու բերան

Անխնայ թափել խեղճ քո գլխին.

ինչ ասեմ նրան լուս ասողին:

Մի թաքցմանիչ կամ հեղինակ,

Տպելով իւր աշխատանքը,

Ուղարկում է մի օրինակ

Տէր խմբաչրի ասպարանքը,

Եւ լայս ունի, որ կը կարդայ

Մի քննութիւն նորա թերթում.

Սակայն դորա փոխանակ նա

Ահա տես, թէ ինչ է կարդում.

«Շնորհակալութեամբ ըստացանք

Այս ինչ գիրքը, գինը չէ թանկ»:

Սրանից պէտք է եզրակացնել,

Որ մեծիմաստ խմբագիրը

Ամբողջ գիրքը չէ կարդացել,

Այլ միայն նորա վերնագիրը.

Կամ եթէ, որ ընդհակառակ,

Կարդացել է նա այն գիրքը,

Աւելի ևս է խայտառակ,

Որ քննելու չունի ձիրքը:

Նոյնն է վիճակն իմ առակի,

Ես էլ նրան չեմ ուղարկի:

Բայց կան մարդիկ, որոնք անշուշտ

Կը կարդան իմ այս առակը,

Որոնք վագրի պէս արիւննուշտ

Կը գզգզեն խեղճ տետրակը.

Որոնք կը քննեն ամեն լառ,

Կը ստուգեն ստորակետները:

Վայ է, թէ սխալ գտնեն մի տառ,

Կամ մոռացած չափերաները:

Դոքա են հայ կրիտիկոսներ,

Մարտիրոսներ, Կիրակոսներ:

Ո՛հ, զգոյշ կացէք, հեղինակներ,

Նոցա հետ մի անէք կտտակ.
 Արամազդի պէս կայծակներ
 Կ'արձակեն, թէ առիթ կը տաք:
 Բարկացկոտ են նոքա ստատիկ,
 Մի՛ գնաք նոցա գուք հակառակ.
 Չեն ճանաչում մեծ ու պստիկ,
 Իսկոյն կ'անեն ձեզ խայտառակ:
 Գիտեմ, ինչ էլ չկայ փրկութիւն,
 Կը պատժեն իմ լանդգնութիւն:
 Երբ քննում են նոքա մի գիրք,
 Սկսում են երկար նախաբանով:
 Ճշմարտութիւնը, ոչ թէ կերբ,
 Խօսում է նոցա բերանով.
 Քարոզում են, թէ կրիտիկան
 Սուրբ է, արդար և անաչառ,
 Որ հաշիւները անձնական
 Երբէք պէտք չէ տան նրան պաշար:
 Բայց վերջացաւ յուսաջառան,
 Մնացածն իշոց և ոչ այլ բան:
 Թող հայհոյեն, որքան կուզեն,
 Այդ ինչ փոյթ չէ ամենւին.
 Բիւր նախատինք վերառ դիզեն,
 Խեղօք ես չեմ ասի խելին,
 Իմ հաշիւը ես վաղօրօք
 Արդ նոցա հետ վերջացնում եմ...

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Առաջարկելով այս մի կտորը պ. Գէորգ Բարխուդարեանցի պօէմիւ-
 վից «Մուրճ»-ի ընթերցողներին, հարկ եմք համարում մեր շնորհակալու-
 թիւնը ցատնել բանաստեղծին, որ նա զիջանեց լանձնել մեզ ներածութիւ-
 նը մի պօէմիւսի, որը դեռ ևս աւարտած չէ: Փոքր սիւր պրիզ չի վինիլ
 հալ հասարակութեան համար, իմանալով, որ մեր վաստակատու բանաստեղծ
 — թարգմանիչը պատրաստուած է ազգային գրականութեանը մօտ ապա-
 դալում նւիրել մի ինքնուրույն գործ, որը, իւր տեսակով, բացառիկ տեղ
 պիտի բռնէ: Դա՛ մի ժամանակակից վէպ է, որի գրական արժէքը զնա-
 տելու համար պէտք է համբերել մինչև պօէմիւսի լուս տեսնելը: Բայց ա-
 ռաջուց խոտտանում ենք մեծաբարդ հեղինակին, որ «Մուրճ»-ը աշխատելու
 է անել իւր գործը աճպէս, որ չարժանանալ անձն զառն ծաղրին, որին նա
 մատնում է առհասարակ բոլոր հալ խմբագրութիւններին:

Խ Մ Բ.